Խ. Աբովյանի անվան հայկական պետական

մանկավարժական համալսարան հիմնադրամ

# ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

**Թեմա՝ Մանկավարժական աշխատողի համագործակցությունը սաների, ծնողների հետ՝ սաների կրթական աշխատանքների կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերում:**

**Կատարող՝ Ձրվեժ համայնքի Ձրվեժ գյուղի մանակապարտեզ ՆՈՒՀ ՀՈԱԿ- ի դաստիարակ՝ Տաթևիկ Կիրակոսյան**

**Ղեկավար՝ Սվետլանա Մարության**

**ԵՐԵՎԱՆ- 2023**

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն

Գլուխ1. Սաների ծնողների և մանկավարժական աշխատողի համագործակցության առանձնահատկությունները

1.1 Ընտանեկան դաստիարակության հոգեբանամանկավարժական առանձնահատկությունները:

1.2 Ծնողներին մանկավարժական գիտելիքների փոխանցմանուղիները:

1.3 Ծնողական ժողովների կազմակերպում

Գլուխ 2.Հետազոտական աշխատանք

2.1 Սաների ծնողների և մանկավարժական աշխատողների համագործակցության մանկավարժական պայմանները

Եզրակացություն

Գրականության ցանկ

# Ներածություն

## Թեմայի արդիականությունը

Երեխան ունի տեսնելու, մտածելու և զգալու իր առանձանահատուկ ունակությունները: Չկա ավելի հիմար բան, քան դրանք մեր ունակություններով փոխարինել ձորձերը:

Ժան Ժակ Ռուսո

Դաստիարակությունը, ինչպես հայտնի է, նպատակաուղղված ներգործություն է երեխաների զարգացման, նրանց գիտակցության և վարքի, աշխարհիայացքի, արարքների և սովորությների վրա: Դաստիարակության հիմնական նպատակն անձի ձևավորմանն ու նրա հետագա զարգացմանը նպաստելն է, սկսած ծնված օրից: Ուստի ընտանիքը եղել և մնում է անձի դաստիարակության հիմնական օղակն ու վճռական գործոնը

**Հետազոտության նպատակը** մանկավարժական տարբեր ներգործությունների միջոցով նպաստել ծնող-մանկավարժական աշխատող համագործակցության բարելավմանը՝ ի նպաստ նախադպրոցականի զարգացման և համակողմանի դաստիարակության հետազոտության խնդիրները:

1. Ուսումնասիրել և փորձարարական աշխատանքով հիմավորել ծնող-դաստիարակ համագործակցության անհրաժեշտությունը, նախադպրոցականի ուսումնադաստիարակչական գործընթացում:
2. Մշակել ծնողների և մանկավարժական աշխատողների համագործակցության կազմակերպման ձևերը և միջոցները:
3. Հետազոտական աշխատանքով հիմնավորել ծնող-դաստիարակ համագործակցության արդյունավետությունը:

Հետազոտությունը իրականացվել է Ջրվեժի մանկապարտեզում:

# Գլուխ 1 Սաների ծնողների և մանկավարժական աշխատողի համագործակցության առանձնահատկությունները

## 1.1 Ընտանեկան դաստիարակության հոգեբանամանկավարժական առանձնահատկությունները

Երեխաները մեր կյանքի ապագան են: Ինչպիսի՞ն կլինի մեր ապագան, այն պայմանավորված է այն իրողություններով, թե ինչպիսի երեխաներ կկրթենք և կդաստիարակենք մենք:

Դաստիարակությունը նպատակաուղղված ներգործություն էերեխաների զարգացման, նրանց գիտակցության, վարքի, աշխարհայացքի, արարքների և սովորությունների վրա: Դաստիարակության հիմնական նպատակն անձի ձևավորմանն ու նրա հետագա զարգացմանը նպաստելն է՝ սկսած ծնված օրվանից, ուստի ընտանիքը եղել և մնում է անձի դաստիարակության օղակը:

Որպեսզի կրթենք հասարակությանն արժանի սերունդ, պետք է համագործակցեն ծնողներն ու դաստիարակները: Առանց ծնողների օգնության և աջակցության՝ հնարավոր չէ լիարժեք արդյունքի հասնել:

Ծնողների հետ շփումը օգնում է դաստիարակին տեղյակ լինել, թե ինչ է կատարվել տանը երեխայի հետ, որպեսզի այս կամ այն կերպ կարողանա ազդել նրա հոգեբանության, վարքի և տրամադրության վրա:

Առաջին բարոյական զգացմունքները արմատավորվում են ընտանիքում: Անհամերաշխ ընտանիքում, ուր չկան ընտանեկան ընդհանուր պահանջներ, բարի

շփումերեխա և ծնող հարաբերություններում, երեխաները լինում են պասիվ, չշփվող և մեկուսանում են իրենց ներաշխարհի մեջ ու հեռանում են ընտանիքի անդամներից:

Ծնողները և ընտանիքի մյուս անդամները երեխային պետք է դիտեն որպես գործուն անձնավորություն և նպաստեն նրա ընդունակությունների զարգացմանը: Երբ երեխան զգում է, որ ընտանիքի բոլոր անդամները ներկայացնում են միատեսակ պահանջներ, նրա մեջ մշակվում է լսելու կայուն սովորություն, լինի տանը, թե մանկապարտեզում: Ընտանիքը հասարակության նյութական, հոգևոր, մշակույթային և այլն արժեքներ փոխանցող կարևոր օղակ է:

Երեխաների կրթության իրականացման գործում մեծ դեր է խաղում նաև ծնող-դաստիարակ-մանկապարտեզ օղակը:

Մանկապարտեզի դաստիարակի հեղինակությունը պայմանավորված է մանկավարժական գիտելիքից, աշխատանքային գործունեությունից, անցկացրած ժողովներից, բաց դասերից, արդարացի մոտեցում բոլոր երեխաներին ճիշտ արձագանք առաջացած խնդիրների վերաբերյալ: Որպեսզի ծնող-մանկապարտեզ կապը ավելի անկաշնադ ու հաճելի լինի, պետք է ստեղծել այնպիսի մթնոլորտ, որ ծնողն իրեն ազատ ու վստահ զգա: Ընտանիքի և մանկապարտեզի կենտրոնում երեխան է:

## 1.2 Ծնողներին մանկավարժական գիտելիքների փոխանցման ուղիները

Ընտանեկան դաստիարակության հաջողությունն ապահովող առաջին նախապայմանը համերաշխ ընտանիքն է: Համագործակցությունը չի կարող հաջողություն ունենալ, եթե չմշակվեն այնպիսի ձևեր, որոնք կնպաստեն ներգրավել, ուղղորդել, խթանել երեխաներին ինքնուրույն հասնել հաջողության:Ծնողները

մշտապես կարիք ունեն իմանալու մանկապատրեզի տեսակետն իրենց երեխայի մասին: Համագործակցության արդյունքում թե՛ ծնողը, թե՛ դաստիարակը արժեքավոր տեղեկություններ են ստանում կարողությունների, հետաքրքրությունների մասին:

## Ի՞նչ են շահում դաստիարակներն ու պարտեզը

- Ծնողների և դաստիարակի միջև երեխայի կարիքների և զարգացման մակարդակի մասին տեղեկությունների փոխանակումից շահում է թե՛ ընտանքը, թե՛ մանկապարտեզը: Ծնողները, լինելով տարբեր մասնագիտությունների տեր մարդիկ, կարողանում են մանկապարտեզին աջակցել կոնկրետ նախաձեռնություններում ՝ սկսած նյութականից մինչև մասնագիտական խորհրդատվություն:
- Մանկապարտեզի աշխատանքն ավելի արդյունավետ է դառնում, երբ ծնողներն ու ընտանիքը դառնում են նրա գործընկերը, ընդունում և շարունակում են մանկապարտեզի նախաձեռնությունները, ինչպես նաև իրենք են նախաձեռնություններով հանդես գալիս:

## Ի՞նչ է շահում ընտանիքը

- Մանկապարտեզի կյանքին ծնողների մասնակցությունը օգնում է ծնողներին ավելի լավ հասկանալ մանկապարտեզի ծրագիրը, հասկանալ իրենց երեխայի հաջողությունների և դժվարությունների հիմքերն ու պատճառները, դիտարկել երեխայի վարքը, հասկանալ երեխայի զարգացման հետ կապված հարցերը, որոնք էլ ավելի հեշտ կդարձնեն երեխայի դաստիարակումը տանը:

- Ծնողներն ու ընտանիքը կարող են մասնագիտական խորհրդատվություն ստանալ երեխայի զարգացմանն առնչվող այն բոլոր հարցերում, որոնցում իրենք դժվարանում են կամ չեն կողմնորոշվում:
- Մանկապարտեզի կյանքում ներգրավելու համար դաստիարակները պետք է նախաձեռնող լինեն և ուղիներ փնտրեն երեխաների միջոցով յուրաքանչյուր ընտանիքի հետ հաղորդակցվելու համար: Դրա համար տնօրինությունը և դաստիարակները պետք է մշակեն և զարգացնեն ծնողների և ընտանիքի այլ անդամների հետ աշխատելու համար անհրաժեշտ հստակ նախագծեր և դրանց իրականացման մեթոդներ: Որպեսզի ընտանիքի մեծամասնությունը ներգրավվի, պետք է անհատական մոտեցուն կիրառվի:

Ուսումնական տարվա սկզբում երեխան, մտնելով մանկապարտեզ, իրականում մտնում է նոր միջավայր, ոչն իրեն անծանոթ է: Դաստիարակը, դիտելով, ուսումնասիրելով երեխաներին, ծանոթանալով նրանց առանձնահատկություններին, ճանաչելով որպես անհատականություն, որոշ ժամանակ անց պետք է կազմակերպվի ծնողական ժողով, որտեղ քննարկվում են կրթության և երեխայի զարգացման փուլերին առընչվող մտահոգությունների մասին հարցեր: Ծնողական ժողովները օգնում են թե՛ դաստիարակին, թե՛ ծնողներին ավելի մոտիկից ճանաչել միմյանց: Առավոտյան հանդիպումների ընթացքում ծնողների ուշադրությունը պետք է հրավիրել <<Ծնողական լրատու>> վահանակին: Այստեղ տեղադրվում են թեմաներ ուսման վերաբերյալ, օրվա կատարվելիք աշխատանքներին և գրականությանը, որին պետք է ծանոթանա ծնողը ընթերցանությամբ:

Օրվա 2-րդ կեսում՝ երեխաներին տուն ճանապարհելիս, դաստիարակը, հանդիպելով ծնողների հետ, ներկայացնում է այն աշխատանքային գործունեությունը, որոնք կատարվել են երեխաների հետ և առաջարկել ամրապնդելու նպատակով աշխատանքը շարունակել տանը՝ ակտիվ պահելով երեխային:

Խմբասենյակի զարգացնող միջավայրը մեծ նշանակություն ունի երեխայի կրթության, դաստիարակության զարգացման համար: Կենտրոններից զատելով խոսքի զարգացման բաժինը ծնողներին պետք է ուղղարդել, ցանկություն արթնացնելդեպի ընթերցանությունը, տրամադրել գրքեր ընթերցանության համար՝

սեր արթնացնելով դեպի գիրքը: Կարդալուց հետո դաստիարակը հավաքում է գրքերը ու զրույց անցկացնում ծնողների հետ, թե ինչքանով արդյունավետ եղավ երեխայի համարև ինչպիռի զգացողություն ունեցավ ծնողը, երբ ընթերցեց երեխայի ներկայությամբ:

## 1.3 Ծնողական ժողովների կազմակերպում

Ժողովները մանկապարտեզի և ընտանիքի միջև կարևոր դեր են խաղում: Դրանք հիմք են ծառայում ի ցույց դնելու այնպիսի խնդիրներ, որոնք հնարավոր չէ արծարծել սովորական աշխատանքային ժամերին: Ժողովներ վարելիս մանկավարժը պետք է ձգտի օգնել ծնողներին՝ իրենց հանգիստ, ցանկալի հյուր զգան, քանի որ պարտեզը մանկավարժի «տարածքն» է: Շփման ժամանակ օգտագործվում է ոչ նեղ մասնագտական բառապաշար, որ շփումը մտերմիկ լինի: Անհրաժեշտ է ընդգծել երեխայի դրական հատկանիշները, ծնողներին առաջարկել հատուկ մեթոդներ, որոնցով նրանք կարող են օգնել իրենց երեխային: Ծնողների գնալուց հետո մանկավարժը պետք է գրի առնի ժողովի մանրամասն արձանագրությունը՝ ներառելով առաջարկությունները ու քնարկված հարցերը:

**Ծնողական ժողովներն անց կացվում են խմբային և ընդհանուր ձևով:**

Ընդհանուր ծնողական ժողովում քննարկման են դրվում հարցեր, որոնք կապված են երեխաների կյանքի և առողջության պահպանման, կրթական-դաստիարակչական խնդիրների հետ: Դրանք անցկացվում են տարեկան երեք անգամ, անհրաժեշտության դեպքում կարելի է անցկացնել արտահերթ ժողով:

Խմբային ծնողական ժողովը ծնողների կողմից տվյալ տարիքի երեխաների դաստիարակության խնդիրներին, բովանդակությանը և մեթոդներին ծանոթանալու, ինչպես նաև մանկավարժական գիտելիքների պրոպագանդման գործարար ձև է:

Դաստիարակի խնդիրն է ոչ թե ծնողներին սովորեցնել, այլ նրանց հետ կիսել աշխատանքի տարիների ընթացքում կուտակված երեխաների դաստիարակության փորձը, քանի որ իր աշխատանքի բնույթով ուսուցիչը ավելի շատ գրականություն է կարդում կրթության մասին, քան ծնողները և իր հաղորդակցմա նշրջանակը: Ծնողներին պետք է ծանոթացնել կրթական աշխատանքի հիմնական ոլորտներին, որպեսզի նրանք հասկանան ընտանիքի և մանկապարտեզի համագործակցության կարևորությունը:Ընտանիքի անդամներին տեղեկություններ են տրամադրվում երեխաների հետ իրականացվող աշխատանքների և երեխաներից ունեցած ակնկալիքների վերաբերյալ: Ծնողներին պետք է տեղյակ պահել , թե ինչպես կարող են նրանք շարունակել աշխատանքները տանը: Ծնողների համար կազմակերպել ծնողական կրթության դասընթացներ `հիմնված ընտանիքների կարիքների և հետաքրքրությունների վրա: Դասընթացներում ներառել տեղեկություններ երեխայի տարիքային զարգացման, կարգապահության և այլ հարցերի վերաբերյալ:

Ծնողի հետ կապը շատ է կարևորվում փորձագետների կողմից `երեխայի դաստիարակության ու կարիքների հանդեպ տանը և մանկապարտեզում միանման մոտեցում ապահովելու և երեխայի հատուկ կարիքներին ճիշտ արձագանքելու համար: Հաճախ ծնողների հետ աշխատանքը սահմանափակվում է ծնողական ժողովների կազմակերպմամբ, որոնք կրթական նշանակություն չեն ունենում, թեև ուսումնական պլանի համաձայն պետք է նախատեսվեն ուսուցողական զեկուցումներեր եխայի զարգացման այս կամ այն թեմայի վերաբերյալ: Ծնողների հետ աշխատանքը պետք է իրականացվի կազմակերպված, նախնական պայմանավորվածությամբ, որպեսզի այն ձևական բնույթ չկրի և արդյունավետ լինի բոլոր կողմերի համար:

Ուսումնական հաստատության աշխատակազմի և ընտանիքների միջև համագործակցային և փոխգործուն հարաբերություններ կառուցելու համար էական նշանակություն ունեն հարգանքը և վստահությունը երեխայի և նրա ընտանիքի անդամների հանդեպ:

Ծնողական ժողովների և ընտանիքի անդամների հետ այլ հանդիպումների ընթացքում դաստիարակն անպայման պետք է անդրադառնա երեխայի համակողմանի զարգացման կարևորությանը և առանձին ներկայացնի զարգացման

յուրաքանչյուր ոլորտն ըստ տվյալ տարիքի երեխաների զարգացման չափորոշիչների: Երեխայի զարգացման առաջընթացի ու կարիքների վերաբերյալ քննարկումներն ու տեղեկությունների փոխանակումը օգտակար են և ՛ընտանիքի անդամների, և՛դաստիարակների համար:

Զրույցը նպատակահարմար է սկսել դրականից, որպեսզի ծնողը համակրանքով ու հավատով լցվի դաստիարակի նկատմամբ: Խոսակցության ընթացքում դաստիարակը պետք է առանց ավելորդությունների, խորհուրդներ տա ծնողին երեխայի դաստիարակության վերաբերյալ:Պետք է ամեն ինչ անել, որպեսզի հայրերը և մայրերը հավատան դաստիարակին և լսեն նրա խորհուրդները: Ուստի ծնողական ժողովում միշտ անհրաժեշտ է վստահության մթնոլորտ ստեղծել:

## Ծնողական ժողովների տեսակները

- Կազմակերպչական
- Թեմատիկ
- Ամփոփիչ

## Դրույթներ ծնողների հետ աշխատելու վերաբերյալ

Ծնողների հետ աշխատանք տանելու ժամանակ անհրաժեշտ է ստեղծագործական և ճկուն մոտեցում: Օգտագործել բազմատեսակ ձևեր, որոնցից է ժողովների անցկացումը ծնողներին հարմար ժամերին: Թույլ տալ ծնողներին, որ իրենք որոշեն ընդհանուր գործին իրենց մասնակցության լավագույն ձևը: Հետևել, որ մյուս մանակավարժները՝ երաշժտության, լոգոեպեդը, գոնե շաբաթը մեկ անգամ հանդիպեն ծնողներին: Փորձեր են կատարում ներգրավել ոչ միայն ծնողներին, այլև ընտանիքի մյուս անդամներին: Հենվել ընտանիքի ուժեղ կողմերի վրա՝ քիչ-քիչ ստվերում թողնելով թույլ կողմերը: Համերաշխությունը կարևոր գործոն է աշխատանքի ժամանակ, քանի որ մեծ ջանքեր են պահանջում: Ամենակարևոր պայմանը գաղտնիության պահպանումնե է յուրաքանչյուր ընտանիքի հետ աշխատելիս:

Կան նաև ոչ պաշտոնական գրառումներ, որը մանկավարժը երեխայի միջոցով տուն է ուղարկում: Դրանք պարունակում են ընտանիքի անդամի համար տեղեկություններ երեխայի մասին: Պարունակում են նաև շնորհակալական խոսքեր մանկապարտեզի աշխատանքին այս կամ այն կերպ մասնակցելու համար: Ընտանիքի անդամները նույնպես կարող են ուղարկել շնորհակալական կամ խնդրանք պարունակող գրություններ:

Պատի տեղեկատվական թերթերը օգնում են ընտանիքին միշտ թարմ տեղեկություն հաղորդելու համար: Դրանց միջոցով ազդարարվում են ժողովները, ամենօրյա դասացուցակը, ուսումնական հաստատության անցուդարձը:

# Գլուխ 2 Հետազոտական աշխատանք

## 2.1 Սաների ծնողների և մանկավարժական աշխատողների համագործակցության մանկավարժական պայմանները

Նախադպրոցական մանկավարժության մեջ շատ են մանկավարժական աշխատողի և ծնողի համագործակցության ձևերն ու տեսակները, որոնք ամուր հիմք են դնում ընտանիք – մանկապարտեզ համագործակցության ձևավորման համար, ինչպես նաև օգնում են կազմակերպելու կրթական աշխատանքները սաների հետ, լուծելու ընտանեկան դաստիարակության մի շարք հարցեր: Ստորև ներկայացնում ենք մանկավարժական աշխատողների համագործակցության ժամանակակից ձևերն ու տեսակները՝ կրթական աշխատանքների կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերի լուծման համատեքստում:

**Այցելություն երեխայի ընտանիք:** Համագործակցության այս ձևը շատ բան է տալիս ուսումնասիրության համար՝ կապ հաստատելով երեխայի, նրա ծնողների հետ,

հստակեցնելով կրթության պայմանները: Մանկավարժական աշխատողը պետք է ծնողների հետ նախապես համաձայնեցնի այցելության հարմար ժամը, ինչպես նաև որոշի այցելության նպատակը: Անցնելով տան շեմը՝ մանկավարժական աշխատողը ֆիքսում է ընտանիքի մթնոլորտը, ինչպես նաև այն, թե ընտանիքի անդամներից ում է հանդիպում, ով է աջակցում զրույցին, ինչպես են ուղղակիորեն քննարկվում բարձրացված հարցերը

Այցելելով ընտանիք, լուծվում են շատ խնդիրներ՝

1. ճանաչում է երեխայի ընտանիքին, տեղեկանում, թե ինչու է երեխան երկար բացակայել: Դիտելով, ուսումնասիրելով երեխայի սոցիալական միջավայրի ազդեցությունը նրա անձի ձևավորման վրա՝ կազմում է կարծիք:
2. օգնել ծնողներին ընտանեկան պայմաններում երեխաներին դաստիարակելու:
3. կազմակերպել ծնողների մանկավարժական իրազեկումը: Դաստիարակի և ծնողի արդյունավետ համագործակցության շնորհիվ շահում է երեխան:

Մանկապարտեզ-ընտանիք փոխհարաբերությունը ավելի արդյունավետ լինելու համար կազմակերպվում է <**Բաց դռների օր>:**

**Հարցազրույցներն** անցկացվում են ինչպես անհատական, այնպես էլ խմբակային: Երկու դեպքում էլ նպատակը հստակ սահմանված է. ինչ է պետք հստակեցնել, ինչով ենք ուզում օգնել: Զրույցի բովանդակությունը հակիրճ է, բովանդակալից ծնողների համար և ներկայացվում է այնպես, որպեսզի խրախուսի ծնողներին խոսել: Մանկավարժական աշխատողը պետք է կարողանա ոչ միայն խոսել, այլև լսել ծնողներին:

**Խորհրդակցություններ:** Սովորաբար կազմվում է խորհրդատվությունների համակարգ, որն իրականացվում է անհատապես կամ ծնողների ենթախմբի համար: Խմբային խորհրդակցությունների կարող են հրավիրել տարբեր խմբերի ծնողներ, ովքեր ունեն խնդիրներ՝ երեխաների դաստիարակության հետ, կամ, ընդհակառակը, հաջողություններ կրթության մեջ (քմահաճ երեխաներ, նկարելու, երաժշտության ընդգծված ունակություններով երեխաներ): Խորհրդակցության նպատակը ծնողների 10 կողմից որոշակի գիտելիքների և հմտությունների յուրացումն է. օգնել նրանց լուծել

խնդիրները: Խորհրդատվության ձևերը տարբեր են (մասնագետի որակավորված զեկույց, որին հաջորդում է քննարկում, խորհրդակցությանը հրավիրված բոլորի կողմից նախապես կարդացված հոդվածի քննարկում, գործնական դաս, օրինակ՝ «Ինչպես սովորեցնել բանաստեղծություն» թեմայով. երեխաների հետ»): Ծնողները, հատկապես երիտասարդները, պետք է գործնական հմտություններ ձեռք բերեն երեխաներին դաստիարակելու գործում: Ցանկալի է նրանց հրավիրել սեմինարների: Աշխատանքի այս ձևը հնարավորություն է տալիս խոսել ուսուցման մեթոդների և տեխնիկայի մասին և ցույց տալ ինչպես կիրառել դրանք: Գործնական սեմինարներն ուղղված են նաև ընտանեկան մի շարք թեմաներ քննարկելու համար:

Ծնողը կատարում է դիտարկումներ, տեսնում իր երեխայի առաջխաղացումները, ձեռք բերած նոր գիտելիքները: Այս ամենը ոգևորում է ծնողին, ինչն էլ պատճառ է հանդիսանում էլ ավելի ուշադիր ու հետևողական լինել երեխայի դաստիարակության զարգացման հարցում:

Մանկապարտեզ-ընտանիք փոխհարաբերությունը արդյունավետ լինելու նպատակով կարելի է ստեղծել <<Առաջարկությունների տուփ>>, որտեղ ծնողներն առաջարկում են իրենց մտքեր, մտահոգություններն ու հարցերը, մանկավարժական կոլեկտիվին ներկայացնել հատուկ տուփի միջոցով, որտեղ անհրաժեշտ չէ անձը ներկայացնել:

Երկկողմանի համագործակցության կանոնավոր շփման միջոցով միջոցով ծնողները ու դաստիարակները սերտորեն համագործակցում են ի շահ երեխաների բնականոն զարգացմանը: Երեխան դաստիարակություն պետք է ստանա առողջ միջավայրում՝ թե՛ տանը, թե՛ մանկապարտեզում, նա պետք է շրջապատված լինիսիրով և ջերմությամբ:

- Եթե երեխային միշտ քննադատում են, նա սովորում է ստել:
- Եթե երեխան ապրում է թշնամության մեջ, նա սովորում է լինել ագրեսիվ:
- Եթե երեխան ապրում է համբերության մեջ, նա սովորում է հասկանալ մարդկանց:
- Եթե երեխային աջակցում են, նա սովորում է գնահատել:
- Եթե երեխային ծաղրում են, նա պարփակվում է իր մեջ:
- Եթե երեխան ապրում է փոխըմբռնման մեջ, նա սովորում է սիրել բոլորին:

Եթե գոյություն ունի մանկապարտեզ-ընտանիք փոխհարաբերությունը, և այն իսկապես կառուցվում է սիրո, համերաշխության, ներողամտության, փոխըմբռնումով, ապա մեր երկրում երեխաները կլինեն զարգացած, մարդասեր, հայեցի: Եթե դաստիարակության հիմքը կառուցված լինի ազգային ավանդույթների և ժամանակակից նախադպրոցական մանկավարժության մահանջների ոգով, ապա հայ ընտանիքը կպահի իր ազգային դիմագիծը, և երեխաները կլինեն հայրենասեր, նման սերունդները կապահովեն ամուր ընտանիք, իսկ կայուն ու ամուր ընտանիքն ազգի գոյապայպանման հիմքն են:

Եվ վերջում կուզեի ավելացնել ՝ մեջբերելով Բենջամին Սփոքի արտահայտած մտքերից՝ **<<Լավ մանկապարտեզը ոչ թե փոխարինում, այլ լրացնում է ընտանեկան դաստիարակությունը>>:**

# Եզրակացություն

Որպես դաստիարակ և ծնող, շատ եմ կարևորում մանկապարտեզ-ընտանիք համագործակցությունը: Երբ ծնողը մասնակից է լինում մանկապարտեզում կազմակերպված ծեսերին, միջոցառումներին, խաղերին, դա ավելի է մտերմացնում մանկապարտեզ-ընտանիք կապը: Ծնողներին ներգրավելը տալիս է իր դրական արդյունքները:

Դրանք են՝

- Ծնողների ոգևորվածությունը
- Համախմբվածությունը
- Մշտական շփումը մանկապարտեզի անձնակազմի հետ

- Ծնողների վստահության բարձրացումի մանկապարտեզի և դաստիարակության նկատմամբ
- Երեխաների լավ վարքը

Մանկապարտեզի-ընտանիք կապի ամրապնդման համար կարևորվել է մեր համատեղ աշխատանքը, որը երկուստեք հաճելի է:

## Գրականության ցանկ


1. Ա. Ս. Մարության, Ա.Մ. Դալլաքյան << Նախադպրոցական մանկավարժության>>

բուհական դասագիրք, Երևան 2008թ.

2. Հասմիկ Միտոյան, Լալա Սմբատյան <<Ուսումնական ձեռնարկ մանկապարտեզի համար>> Երևան 2010թ.

3. Ա. Հովհաննիսյան. Դաստիարակենք միասին 2014 Երևան

4. Հ. Խաչատրյան. Մանկական հոգեբանություն 2022 Երևան

5. Ձ. Թաղյանոսյան. Դաստիարակենք անվտանգ վարքագիծ 2003 Երևան

6.Т.И ОверчукВаспитиние детей дошкольного возраста в условиях семьи и детского сада. Москва 2003 г.